

ՀՐԹԻՈՒՆԵՐ
ՄԱՔՍԱՆԵՆԳԵԼՈՒ ՓՈՐՁ

Սուրիոյ Ընդհանուր անվտանգութեան ծառայութիւնը յայտարարեց, թէ Հոմսի շրջանին մէջ խափանած է «Կրատ» տիպի հրթիռներ Լիբանան մաքսանեցելու փորձ մը, առանց հրապարակելու յաւելեալ տեղեկութիւններ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ
ՍԴՇԿ-Ի
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ
ՀԵՏ

Որպէս վերջին նախապատրաստութիւն յառաջիկայ Կիրակի, 18 Մայիս 2025-ին, տեղի ունենալիք Պէյրութի քաղաքապետական եւ թաղապետական ընտրութիւններուն, ԶԿԲՄ-ի Սահակեան-Լ. Սկրտիչեան գոլէճի «Արմէն եւ Բերաքթ ճեղճեան» սրահին մէջ երէկ երեկոյեան տեղի ունեցաւ համդիպում-գրոյց՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Պէյրութի մէջ առաջադրած քաղաքապետական թեկնածու Յովհաննէ Յակոբ Պշաքճեանի եւ թաղապետական թեկնածու, թաղապետ Արմէն Մելքոն Սէֆերեանի հետ:



Լիբանանի, Հայաստանի եւ Հնչակեան Կուսակցութեան քայլերգներու ունկնդրութենէն ետք, ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի անդամ ընկ. Գեորգ Տաղեան բացման խօսքին մէջ յայտարարեց, թէ կուսակցութիւնը այս ընտրապայքարը կը մղէ «Տէր կանգնիր ազատ բուկիդ» լոզունգով, շարքին եւ հետեւորդներուն կոչ ուղղելով ըլլալու բժախնդիր ու համդէս գալու տիպար կեցուածքով, միաժամանակ կատարելով քաղաքացիական ու ազգային պարտականութիւնը Լիբանանի եւ Հնչակեան կուսակցութեան համդէպ: «Անխտիր մեր մասնակցութիւնը բերենք մայրաքաղաք Պէյրութի բարգաւաճումին միտող հոլովոյթին», յորդորեց ընկ. Տաղեան:



Ապա ընթերցուեցան զոյգ թեկնածուներուն կենսագրական համառօտ գիծերը, ուր բացայայտուեցան Յովհաննէ Յակոբ Պշաքճեանի եւ Արմէն Մելքոն Սէֆերեանի մասնագիտական հմտութիւններն ու աշխատանքային յաջողութիւնները, ինչպէս նաեւ անոնց ազգային դիմագիծը, նուիրումները եւ ծառայասիրութիւնը իրենց շրջապատին հանդէպ:



ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի խօսքը փոխանցեց ընկ. Տիգրան Սիւրիանեան: Ան բացատրեց, որ դառնալով լիբանանեան հարեմիքին եւ ժողովուրդին անբաժան բաղադրամասը, Հնչակեան կուսակցութիւնը շարունակաբար մասնակցութիւն կ'ընեն իրենց ժողովուրդին համար:

Հարունակութիւնը տեսնել էջ 4

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԵՐԹԸ
ՊԵՅՐՈՒԹԻՆ Է

Փուլային դրութեամբ կազմակերպուող Լիբանանի քաղաքապետական ու թաղապետական ընտրութիւնները հասած են միջնակէտի: Յառաջիկայ Կիրակի, 18 Մայիսին, տեղի պիտի ունենայ մայրաքաղաք Պէյրութի ընտրական փուլը, որմէ ետք կարգը կը հասնի նաեւ Պշեալային, հարաւին ու Նապաթիին: Նախանցեալ շաբաթավերջի Լեռնալիբանանի ընտրութիւն-



ներէն ետք, Ներքին գործերու նախարարութիւնը երէկ հրապարակեց նաեւ երկու օր առաջ Հիւսիսային Լիբանանի եւ Աքքարի գաւառներուն մէջ կատարուած ընտրութիւններուն պաշտօնական արդիւնքները: Ներքին գործերու նախարար Ահմատ Հաժժար երէկ յայտնեց, որ հիւսիսային Լիբանանի գաւառներուն մէջ քուէարկութեան մասնակցութեան համեմա-



տութիւնը հասած է 37,25 առ հարիւրի, իսկ Աքքարի մէջ՝ 49,33-ի: Ըստ նախարարին, կրակոցներուն հետեւանքով բանակին մօտ երէկ ձեռքակալուած կը մնար 24 մարդ:

Ընտրական այս երկրորդ փուլը ընթացաւ ապահովական որոշակի խախտումներով, մասնաւորաբար Թրիփուլիի մէջ, ուր

ԱՌՒՆ ՔՈՒԷՅԹՅՈՒՆԵՐԸ
ԿԸ ՀՐԱԻՐԷ
ԼԻԲԱՆԱՆ

Հարունակելով արաբական երկիրներ այցելութիւններուն շարքը, համրապետութեան նախագահ ժողէֆ Աուն ուղղուեցաւ Քուէթ, ուր տեսակցեցաւ երկրի իշխան շէյխ Մըշաալ ալ Ահմատ Ալ ժապերի ալ Սուպահի հետ: Վերջինս Քուէթի յանձնառութիւնը յայտնեց Լիբանանին, շեշտելով Ծոցի արաբական երկիրներուն հետ Պէյրութի յարաբերութիւնները վերամրացնելու կարեւորութիւնը: Աուն շնորհակալութիւն



յայտնեց Քուէթի իշխանին՝ Լիբանանին շարունակաբար աջակցելուն եւ լիբանանցիներուն կողքին կանգնելու որոշումին համար: Աուն քուէթցիներուն եւ արաբներուն կոչ ուղղեց վերստին Լիբանան այցելելու, հաւաստիացնելով թէ բոլորը արժան կ'ըմբռնեն զենքի գործածութեան իրաւունքը լիբանանեան պետական հաստատութիւններուն վերապահելու անհրաժեշտութիւնը:

ընտրական օրը աւարտեցաւ տօնական ծանր հրաձգութեամբ եւ վիրաւորներով, որոնց շարքին էր հեռուստային լրագրող Նատա Անտրաուսը, որ վիրաւորուեցաւ անկանոն արձակուած փամփուշներէն: Մօտակա Տանիէ գաւառին մէջ ալ հրաձգու-



թեան փոխանակումի հետեւանքով ինկաւ երեք վիրաւոր: Լիբանանեան բանակը յայտարարեց, թէ հիւսիսի եւ Աքքարի մէջ ընտրական արդիւնքներու յայտարարութենէն ետք ձեռքակալուած է տօնական կրակոց արձակած 35 մարդ:

Վարչապետ Նաուաֆ Սալամ անդրադարձաւ ընտրական կաշառքի հարցին եւ զգուշացուց, թէ նշեալ օրինախախտումը



կատարողները պիտի հետապնդուին եւ խստիւ պատժուին: Սալամ խոստացաւ ձեռքբալել նաեւ ընտրական օրերուն երկրին ապահովութիւնը վտանգողները: Ան դրուատեց ապահովական եւ զինուորական ուժերուն արագ միջամտութիւնը կանխելու համար ապահովական միջադէպերուն ընդարձակումը:

ՅԻՇԵԼՈՎ
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ
20 ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ
ԱՐԿԱԾԱՀԱՐ ՄԱՀԸ

Միջին ու նոր սերունդները պիտի չյիշեն: Նոյնիսկ ուս պիտի թօթուեն՝ հարց տալով, թէ ո՞ր ուսանողներու, ի՞նչ արկածի մասին է խօսքը:

Տարեց ու աւագ սերունդը սակայն յստակօրէն պիտի յիշէ դէպքը, ու այդ յիշողութիւնն իսկ պիտի փշաքաղէ, պիտի տրտմեցնէ զինք պահ մը:



Ես, որ կը սիրեմ պրպտել ու թղթատել հայ մամուլի հին հաւաքածոները, քանի-քանի անգամներ դէմ-յանդիման գտնուած են լիբանանահայ այլազան թերթերու 1960-ի ապրիլեան այն թիւերուն, ուր քսանի չափ թարմատի հայ ուսանողներու լուսանկարները շարուած են կողք-կողքի, սեւ երիզի մէջ առնուած, սգալով անոնց դաժան մահը, հաւաքական աղիտալի կորուստը՝ ինքնաշարժի ահաւոր ու սարսազողցիկ արկածի մը հետեւանքով...:

(Հարունակութիւնը տեսնել էջ 2)

ՄԵԾ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ԳԻՆԸ

(ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՅԱՂԹԱԿԱՆԻ 80-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Յիրաւի, «Մեծ Յաղթանակ» յորջորջած են նացիական-ֆաշիստական ուժերուն անփառունակ խոնարհումը մարդկութեան մեծամասնութեան դիմաց: Պատմութեան ամենահաւուր պատերազմի աւարտին ազդանշանն էր այդ, երբ 1945 Մայիս 9-ին, Պերլինի մէջ, փլատակներու ընդմէջէն կը բարձրանար Խորհրդային միութեան դրօշը: 20-րդ դարուն, երկու անգամ, Գերմանիա իր դաշնակիցներով, երկրագունդը նետեցին արիւնի ու բոցերու, զոհերու եւ անպատմելի վայրագութեանց գեղէնը: Առաջինին, մեծ չարիքին չարանենձ հեղինակները, առանց խղճաւարութեան, առանց իրենց ստացած պատիժին անդրադառնալու, իրենց պատճառած ողբերգութեանց հանդէպ դոյզն խիպի ու ամօթի, կրկնեցին նոյնը աւելի դաժանութեամբ, աւելի լայն տարողութեամբ եւ արդիականացած հրէշութեամբ: Փոխվրձ է՞ր, ազգային բնա՞զդ էր, անուղղելի ռազմատենչութիւն է՞ր, թէ՞ Դիքլէրի ուղեղէն ծնած երեւակայութեան հետեւանք էր՝ աշխարհին տիրելու գերմարդ գերմանացիի (արիացի) անզսպելի ցնորամտութեամբ:

Երկարատեւ եղաւ արիւնահեղութիւնը (1939-1945 թ.): Մաշոդական եւ հիւժող էր պատերազմը: Ողջ մարդկութիւնը տուժեց՝ իւրաքանչիւր հատուած իր բաժինով, իր չափով: Նացիզմը գտած էր իր հոգեհարազատ ֆաշիզմը՝ Մուսոլինիի դէկավարութեամբ: Ի հեճուկս այս սոսկալի մոլեգնութեան, բոլորին ուղղուած մարտահրաւերը յստակ էր՝ սպառնալու տախտապարել այս անաստելի երկուորեակը, որոնց աւելի ուշ միացաւ ճարձգը: Գերմանիոյ յարակից երկիրներ, բնաւ անաբար, եղան առաջին թիրախները, յատկապէս Ֆրանսա: Մինչեւ ատամները զինուած եւ հմտօրէն պատրաստուած նացիստական ուժերուն կը թուէր թէ պիտի կարողանան ծնկաչոք դարձնել բոլորը՝ մէկ առ մէկ՝ հերթականութեամբ. պիտի յաջողին իրենց նորաստեղծ մարդաշինք զենքերով ահաբեկել չորսիդին:

Սկզբնական յաջողութիւններով խանդավառ, Դիքլէր գայթակղութիւնը ունեցաւ իր զօրքերը ուղղելու իս. Միութեան դէմ: Ան երեսի ուզեց գերազանցել Նափոլէոնը, որ 1812-ին, Ույմ-պիսի սիւս պատրանքներով արշաւեց Ռուսաստան՝ անոր ահեղ ցուրտին ու ծիւցէ տափաստաններուն մէջ իր ջախջախիչ պարտութիւնը կրելու: Ինչպէս չարտուած էր Ֆրանսայի կայսրը ժամանակին, նացիստական զօրքերը նմանատիպ ճակատա-գիր ունեցան Սթալինըրատի փողոցներուն մէջ: Դիքլէրական ժամտ թաթը, իր ողջ ժանրութեամբ ու կոշտութեամբ, պիտի փշորէր Խորհրդային միութեան ժողովուրդներուն, զինուոր-ներուն եւ անոր քաջարի հերոսներուն կողմէ: Թէեւ շատ ծանր կորուստներու ենթարկուեցաւ իս. Միութիւնը, պաշարուած քաղաքներ հերոսական զուպարով տոկացին գերմարդկային ճիգերով, միլիոնաւոր զոհեր ինկան ռազմի դաշտին վրայ, բայց ի վերջոյ սանձուեցան Դիքլէրն ու իր խելացնոր երազները: Իս. Միութիւնն ուղղակիօրէն կրեց պատերազմին ծանրութեան աշիւծի բաժինը: Անչափելի կորուստներու դիմաց, ի չիք դարձաւ այն սպառնալիքը, որ հետզհետէ մօտենալով կրնար քայքայել իս. Միութիւնը եւ փոխել աշխարհի բարտէզը: Ֆաշիզմը եթէ շարունակէր իր նուաճողական ընթացքը եւ իրականութիւն դառնար Դիքլէրի սրարշաւ յարձակման ծրա-գիրը, ո՞վ կրնայ պատկերացնել թէ մարդկութիւնը ինչպիսի՞ աղէտի մը դէմ-յանդիման պիտի գտնուէր գլուխը կախ ու սիրտին մէջ ցաւ: Արդարեւ, խորհրդային ժողովուրդներ միակծի ու վճռական պաշտպանութեամբ, անձնդիր զոհաբե-րութիւններով եւ ապա կորուսկ ու նպատակասլաց հակազոր-հով, աստիճանաբար ազատագրեցին իրենց հողերը հիթլերեան կրունկներէն, յառաջացան անմայն խիզախու-թեամբ, համբերատար ու նպատակամետ յաջողութիւններով հասան Պերլին իր օրրանին մէջ խեղդելու չարիքին արմատը: Անոնց պայքարը, կամքն ու կորովը, անգնահատելի զոհերն ու զոկանքները փրկեցին ուրիշ ժողովուրդները ֆաշիզմի աղէտէն: Անոնք այնքա՞ն երախտապարտ պէտք է ըլլան մեծ յաղթանակը կերտած ժողովուրդին, քանի անոր բարիքները վայելեցին բոլորը՝ աշխարհի տարբեր ծագերուն: Ահա թէ ինչու պանծալի թուական է Մայիս 9-ը, որ կը տօնուի ցնծագին ոգելորութեամբ:

ԲԱԿ ՊԱՇՏՏՈՆԱԴԵՍ Կ՝ՈՐՈՇԷ ՎԱՐ ԴՆԵԼ ԶԵՆՔԸ

Քիւրտիստանի աշխատաւորական կուսակցութիւնը հրապարակեց իր 12-րդ համագումարին արդիւնքները: Ըստ քրտական կուսակցութեան, որոշուած է կազմալուծել կազմա-կերպչական կառոյցը եւ պաշտօնապէս վերջ տալ զինեալ պայքարին, ինչպէս նաեւ կուսակցութեան անունով կազմա-կերպուող շարժումներուն: Նշենք, որ Քիւրտիստանի աշխա-տաւորական կուսակցութեան զինեալ շարժումներուն վերջ



տալու որոշումի մասին նախապէս յայտարարած էր նաեւ կուսակցութեան բանտարկուած դէկավար Ապտիլլա Օճա-լանը՝ բանտէն կուսակիցներուն ուղղուած պատգամին մէջ:

ԻՐԱՆԻ ԶԱՐՑՈՎ ԴՐԱՎԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Միացեալ Նահանգներու եւ Զինաստանի իշխանութիւնները համաձայնեցան երեք ամիս առեցնել մաքսային փոխադարձ վճարները, որոնք սահմանուած էին վերջին շրջանին՝ ամե-րիկեան նոր վարչակարգին նախաձեռնութեամբ: Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ յայտնեց, որ չաբա-

Պերլինի կիսափուլ կառոյցներու կողքին, հայ զինուորներ Քոչարի պարով մշեցին իրենց յաղթանակը: Եւ սա պատա-հական չէր: Պատերազմին ռազմակոչը ոտքի հանած էր հայու-թեան կարեւոր տոկոսը. թէեւ կային նացիստներուն լծակից կամակատար հայ ֆաշիստներ՝ իրենց սուիմները ուղղելու իս. Զայաստանի դէմ, որոնք թութակաբար կը փառաբանուին այսօր՝ որպէս փայլուն ռազմիկներ ու ազգային հերոսներ...: Իս. Զայաստան, հակառակ իր փոքրաթիւ բնակչութեան, շուրջ 600 հազար զինուոր դրկեց ռազմադաշտ՝ նախ նացիստները զսպե-լու եւ ապա Պերլին խոյանալու: Ինչքա՞ն հերոսներ ինկան Քուրսքի ճակատամարտին, Կերչի նեղուցին, Թամանեան թերակղզիին թէ Պերլինի մատոյցներուն: 300 հազար նահա-տակ ունեցաւ հայութիւնը, սզաց զրեթէ ամէն օճախ ու սեւով շղարշուեցաւ ամէն երդիք: Իսկ 300 հազար հայորդիներ վիրաւոր կամ պարտասած վերադարձան հայրենիք՝ վայելելու յաղթանակն ու խաղաղութիւնը: Ինչքա՞ն անդամահատուած զինուորներ մտան տուն՝ վերապրելու հայկական ոգիով, նոր բոյներ կազմելու երջանիկ յոյսերով: Անոնք արդար պայքարով եւ անուրանալի սխրանքներով նուաճած էին խաղաղութեան ու հայրենի հողին զինը: Մեզի համար մեծ էր կորուստներուն թիւը: Մեծ եղեռնէն վերապրած հայութիւնը ստացած էր հերթա-կան հարուածը: Կը մնար լաւատեսութեամբ եւ աշխատան-քային նոր թափով ու աւիշով դարձանել վիշտը, կառուցել աւելի լաւը՝ քանզի հպարտառիթ յաղթանակը պէտք է շքեղա-նար բարի ու արդար քրտինքով:

Պատերազմի այս թուրբօհիւ, հայութիւնը տուաւ զինուո-րական հմուտ գործիչներու աստղաբոյլ մը մարաշխախտներ Յ. Բաղդասեանի, Յ. Պապաջանեանի, Ա. Խամփերեանցի եւ ծովակալ Իսակովի գլխաւորութեամբ: Նուէր Սաֆարեան թէ Յունան Աւետիսեան փառքով կատարեցին իրենց պարտքը հայրենիքին նկատմամբ: Զայութիւնը, որ գերմաններուն հան-դէպ լեցուած էր մաղծով ու գայրոյթով, տակաւին Մեծ Եղեռնի օրերէն՝ որպէս Օսմանեան կայսրութեան դաշնակից եւ Զայոց ցեղասպանութեան կազմակերպիչ ու մեղսակից, հասնելով Պերլին վրիժառու կ'ըլլար իր կոտորուած հայրերուն եւ մայրերուն առեան կանչին, գրաւէալ հայրենիքի կարօտին, ցեղասպանեալ հայրենակիցներուն եւ որբացած մանկիկնե-րուն: Ուստի, Զայրենական պատերազմը նաեւ հայուն պատե-րազմն էր թուրքին զինակից ու հովանաւոր ուժին դէմ: Դիքլէրի արիւնալիւր աջքերուն մէջ հայ զինուորը կը տեսնէր զազա-նաբարոյ Թալաթին արիւնատենչ հայեացքը: Զայուն պա-տասխանը ամբողջական չէր, ուշացած էր նաեւ, բայց՝ պատասխան էր յամենայնդէպս:

Զայ ժողովուրդը, անոր աշխարհատարած հայրենասէր ու յառաջդիմական հատուածը յատկապէս, ընդառաջելով ամե-նայն հայոց կաթողիկոսութեան տեղապահ Գեորգ արք. Զօրեքճեանի 2 Փետրուար 1943-ին հրապարակած կոչին՝ նիւթապէս զօրակցելու իս. Միութեան պաշտպանութեան գործին, իր սրտաբուխ եւ լիաբուռն օժանդակութեամբ ձեռք մեկնեց անվերապահօրէն եւ որուն արդիւնքով պատ-րաստուեցաւ հրասայլերու շարասիւն մը՝ «Սասունցի Դաւիթ» անունով: Այս հայրենակերտ վարքագիծը բարձրօրէն գնա-հատուեցաւ Կարմիր բանակին կողմէ, որովհետեւ ռազմա-դաշտին վրայ տուաւ իր գործնական արդիւնքները: Այդ օրերու *հայոց հոգեւոր պետը կը գրէր նաեւ. «Պարծանքով պիտի յիշեմ, որ հայ զինուորը պատուով կատարեց հայրենի ժողո-վրդի սրբազան պատգամը: Իր անձնուէր հերոսութեամբ Զայրենական Պատերազմուն հայ մարտիկը հայ ժողովրդի մարտական ոգու նոր ու փայլուն օրինակներ հանդէս բերեց եւ յաղթանակի փառքով պսակեց հարազատ ժողովրդին եւ իրեն»:*

Իս. Միութեան ժողովուրդներու կողքին, նաեւ հայը իր սուրը փառքով դրաւ պատեան:

Յաղթանակին զինը թանկ էր: Այդ պատճառով ոչ ոք մոռցուած է եւ ոչինչ մոռցուած է:

Սերունդները պարտին պատշաճօրէն գնահատել Մեծ Յաղ-թանակին բարձր զինը. պատշաճօրէն յարգել Մեծ Յաղթանակը կերտած նահատակներուն յիշատակը:

«Ա»

ՅԻՇԵԼՈՎ ԼԻԲԱՆԱԿԱԶՅ 20 ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԱՐԿԱԾԱՀԱՐ ՄԱՀԸ (Շարունակուած էջ 1-էն)

Դէպքը պատահած էր 1 Ապրիլ 1960-ին: Անհաւատալի ու ցնցիչ պատահար: Ապրիլմէկեան կատակ մըն էր կարծես...: Վաղամեռիկ Պետրոս Դուրեանի բնորոշումով՝ «Դամբանի մրուրով գրուած» թուական մը:

Այսօր կրկին յիշեցի այդ դէպքը, որովհետեւ անդրա-դարձայ, որ **միշդ 65 տարի** սահեւ անցեր էր այդ քսան անբախտ դպրոցականներուն մահուան թուականէն:

Ստածեցի, որ ամոնք եթէ ապրէին, եթէ սեւ ճակատագիրը դաժանօրէն չփոցներ անոնց կեանքին թելը, հիմա անոնցմէ ոմանք շուրջ 80, 85-ամեայ ծերունիներ պիտի ըլլային, շրջապատուած՝ զաւակներով, թոռներով, հարսերով ու փեսաներով...:

65 տարի...

Ապրիլ ամիսը եկա՛ն ու անցա՛ն: Ոգեկոչուեցան Մեծ Եղեռ-նի նահատակները, յիշատակուեցան Լիբանանի քաղաքա-ցիական պատերազմի զոհերը (յիսնամեակի առթիւ), սակայն ո՛չ ոք յիշեց արկածահար քսան դեռատի մանչերն ու աղջիկները...:

Գիտեմ: Մարդոց յիշողութիւնը կարճ է:

Ես կը սիրեմ թիպալարել հոսանքն ի վեր: Եւ այդ սկզբուն-քէն մեկնելով է որ այսօր, իմ այս սիւնակին մէջ կ'ոգեկոչեմ արկածահար քսան այդ երիտասարդները, իրենց մահուան 65-րդ տարելիցին առիթով: Աշխարհիկ հոգեհամզօրս մը կ'ուզեմ կատարել անոնց մաքուր եւ անբիծ հոգիներուն համար: Կ'ուզեմ արծանագրել անոնց անունները մէկ առ մէկ:

Բայց նախ՝ հարկ է վերապատմել, թէ ի՞նչ պատահած էր այդ օր: Արկածը ինչո՞ւ՝ այդքան ահաւոր էր՝ որ խլեց այսքան մեծաթիւ զոհեր:

*

Այդ օր, 1 Ապրիլ 1960-ին, Էշթէֆիէի Զայ Աւետ. Բարձ-րագոյն վարժարանի աշակերտները ութ հանրակառքերով պտոյտի գացեր էին Պեքալի դաշտը, Այնճար: Դպրոցին կողմէ կազմակերպուած աւանդական պտոյտ մըն էր այս: Երեկոյեան ժամը 6:00-ին, մինչ բոլորը Պէյրութ կը վերա-դառնային, Սոֆարէն դէպի Պիսնտուն ծամբուն վրայ համ-րակառքերէն մէկուն արգելակները կը խանգարուին, վարորդը չի յաջողիր կեցնել հանրակառքը, որ գառիվարի մը վրայ սուրալով՝ հակակշիռէ դուրս կու գայ եւ իվերջոյ կ'երթայ կը բախի տան մը պատին ու ցածկէկ պատշգամին եւ ահագնադղորդ աղմուկով մը ջարդուփշուր կ'ըլլայ...: Կառքին մէջ գտնուող 34 ուսանողներէն 18-ն (մեծաւ մասամբ՝ աւարտական կարգի աշակերտներ) եւ իրենց ընկե-րակցող 3 ուսուցչուհիներ կը մահանան տեղն ու տեղը...: Իսկ վարորդը, կ'ըսուի թէ նախքան մահաբեր բախումը, ինքզինք դուրս կը նետէ հանրակառքին դռնէն ու կը փրկուի...:

Լիբանանահայ (նաեւ լիբանանեան օտարալեզու) թերթե-րը յաջորդ օր կը նկարագրէին զարհուրելի արկածը, կը տպէին երկաթի ծնլուած զանգուածի մը վերածուած արկածեալ հանրակառքին լուսանկարները ու կը նկարագ-րէին տեղւոյն վրայ պարզուած սրտաճմլիկ տեսարանները: Արիւնը ողորդած է գետինը, բզբտուած կամ մասնատուած դիակներ դէս ու դէմ շարտուած, ողջ մնացողներուն ճիչերն ու աղաղակները երկինք կը բարձրանան...:

Աղէտին շամբահարիչ գոյժը կը հաղորդուի Պէյրութ: Զիւանդատար կառքեր կը հասնին վայրը, արկածահար օթօպիւսէն դուրս կը հանուին զոհերուն մարմինները, որոնք անճանաչելի մակոյտներու վերածուէր են...: Այդ դիակները, նաեւ՝ վիրաւորները, կը փոխադրուին մայրաքաղաքի Օթէլ Տիէօ, Գարանթիւն եւ Սի.ԷՄ.ՍԻ հիւանդանոցները: Արկած-եալներուն ծնողները գրեթէ խելագար՝ հոն կը փութան, իրենց զաւակներէն լուր մը առնելու յոյսով: «Արարատ» այս առթիւ կը գրէր. «Սակայն կարելի՞ է ճանչնալ մակոյտի վերածուած, անճանաչելի դարձած մարմինները: Ոմանք դժուարութեամբ, հազիւ հազուատեղէններէն կրնային զանա-գանել իրենց սիրելիները, ուրիշներ կը մարին իրենց սրտա-հատորներուն վրայ, ողբը կը պատէ չորսդին»...:

Ահա՛ եղերաբախտ զոհերուն անունները.

-- Ուսուցչուհիներ՝ օրդ. ժանեթ Փալասեան, օրդ. Լուսին Քիւրքճեան (փոխտնօրէնուհի), օրդ. Կրէյս Քիթապճեան: Ուսանողներ (բոլորն ալ 15-19 տարեկան)՝ Վահէ Գարա-կեօզեան, Վարուժան Մամուշակեան, Զրաչ Եարտընճեան, Ասպետ Մանճիկեան, Պօղոս Օֆլազեան, Նորայր Սալիպ-եան, ժագ Օհանեան, Գրիգոր Այնիլեան, Գրիգոր Փառնո-եան, Սարգիս Մարաշլեան: Ուսանողուհիներ՝ Թագուհի Գոճայեան, Սեղա Մամուշակեան, ժանեթ Օֆլազեան, Սիր-վարդ Կեօքլեօզեան, Նորա Շատարեւեան, Զարուհի Պալ-պուչաբեան, Լիտիա Միսիսեան եւ Արմենուհի Տեմիրճեան:

Այս աննախընթաց աղէտին ի լուր՝ Պէյրութի բովանդակ հայութիւնը կը մատնուի խոր վիշտի: Ի յարգանս զոհերուն յաջորդ օր հայկական բոլոր դպրոցները փակ կը մնան: Ազգային ամէն ձեռնարկ կը յետաձգուի: Սուգը կը համակէ նաեւ Լիբանանը:

Ահա այսպէս, 21 գարուններ կը խամրին անժամանակ: Անոնք կը հեռանան կեանքէն՝ դեռ առանց մօտեցած ըլլալու անոր: «Մնաց բարով» կ'ըսեն կեանքին առանց «բարի լոյս» ըսած ըլլալու: Ի մի բան՝ կը մեռնին առանց ապրած ըլլալու...

Լ. Շ.

**www.araradaily.com**

ՍՓԻՒՌԻ ԿԱՌՈՅՅՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԲԵՍՉԵՆ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ

Երիտասարդությունը կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողությունները

ԳՐԿՏ. ԶՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Քանի մը ամիս առաջ, «Սփիւռքի մեծ բացական ղեկավարութիւն»⁽¹⁾ վերնագրով յօդուածի մը մէջ անդրադարձած էի, թէ ինչպէս Սփիւռքի «դասական» կազմակերպութիւնները խոր ճգնաժամի մէջ են, թէ սփիւռքեան ղեկավարութեան քանակական եւ որակական նօսրացումը հիմնական ու գոյութեան կանխիկ է, եւ կառոյցները չեն յարմարած 21-րդ դարու իրականութիւններուն: Առանց արմատական ինքնաքննադատութեան, երիտասարդներու եւ կանանց ներգրաւման, բաց երկխօսութեան եւ ժամանակակից աշխատելակերպի որդեգրման, կառոյցները դատապարտուած են աստիճանաբար կազմալուծուելու: Միասնականութեան մասին դատարկ կարգախօսերը գործնական քայլերով պէտք է փոխարինուին՝ նոր տեսլականով ու նոր առաջնորդներով՝ հիմնուած վստահութեան, արդիական մեթոտներու եւ համադրուած ջանքերու վրայ:

Այս յօդուածին մէջ կը փափաքիմ առանձնայատուկ ուշադրութիւն դարձնել երիտասարդութեան վրայ եւ որոշ գործնական առաջարկներ ընել:

Անուրանալի է, որ տանամետակներու ընթացքին, սփիւռքեան ազգային կամ համայնքային կառոյցները - եկեղեցին, միութիւններ, կուսակցութիւններ, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ - համայնքային կեանքի ողնաշարը եղած են: Անոնք ջանքած են հայրենասիրական ոգի, փոխանցած են հոգեւոր դաստիարակութիւն, մշակոյթ ու լեզու, եւ ստեղծած են պատկանելիութեան մթնոլորտ մը աշխարհի տարբեր ծագերուն տարածուած հազարաւոր հայերու համար: Սակայն, ժամանակները փոխուած են: Նոր սերունդի մտածողութիւնը, աշխարհայեացքը ու սպասումները այլ են: Իսկ հարցումը, որ կը մնայ անպատասխան սերունդներու այս կամուրջը ինչպէ՞ս պիտի կերտուի կամ ձեւաւորուի:

Կառոյցը միջոց է, ոչ՝ նպատակ

Առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել պարզ բայց կարեւոր իրողութիւն մը՝ ազգային կառոյցները ինքնին նպատակ չեն: Ակումբը, միութիւնը կամ կուսակցական կառոյցը միջոցներ են, ոչ թէ վերջին կայարան: Այդ կառոյցները կը գործեն որպէս անցումային օղակներ, որոնք մարդը կը կապեն իր ինքնութեան, մշակոյթին ու արմատներուն: Սակայն երբ կառոյցը դառնայ ինքնանպատակ՝ առանց հաշուի առնելու թէ ով ներգրաւուած է եւ ինչու, ան կը դադրի կենսունակ ու իմաստալից ըլլալէ:

Շատ յաճախ հայկական կազմակերպութիւններու քննարկումներուն մէջ բացակայ է այս ճշմարտութիւնը: Կարծրացած է այն ենթադրութիւնը, որ «ակումբ»ը կամ «համայնքային կեդրոնը» կամ նոյնիսկ եկեղեցին, բոլորին կողմէ նոյն կերպ կը մեկնաբանուի, կամ թուր «օգուտները» նոյն հետաքրքրութիւնը, ակնկալութիւնները ունին, նոյն գնահատականը կ'ընեն: Որեւէ լուրջ կազմակերպութեան մը ղեկավարութիւն պէտք է ունենայ այն խոնարհութիւնն ու իրատես կամքը՝ հարց տալու, թէ «Ի՞նչ կ'ուզեն մեր երիտասարդներն ու նորահաս սերունդները: Ի՞նչ կ'ակնկալեն տեսնել մեր կազմակերպութիւններուն մէջ»:

Փաստերը ի՞նչ կ'ըսեն

Ըստ վերջին տարիներուն հայկական սփիւռքի մէջ կատարուած ուսումնասիրութիւններուն⁽²⁾, Սփիւռքի կազմակերպութիւններու դերին մասին 16-35 տարեկան հայ երիտասարդներուն մօտ քանի մը կարեւոր մտածումներ կը նկատուին: Շատեր յատկապէս անջատուած կը զգան համայնքային կազմակերպութիւններէն եւ անոնց առաջնորդներէն: Օրինակ՝ Մոնթրէալի մէջ, Քեպլէ ծնած երիտասարդուհի մը կ'ըսէ, թէ հայկական վարժարանին մէջ չէր կրնար ընդունուած կառոյցի կարծիքէն տարբեր կարծիք յայտնել. թոյլատրելի չէր: Ըստ 2019-ի Սթամբուլի, Մոնթրէալի եւ Լիբանան կատարուած ուսումնասիրութեան, 16-24 տարեկաններու 84 տոկոսը եւ 25-34 տարեկաններու 76 տոկոսը հայկական քաղաքական կուսակցութիւններու հետ կապ չունէին: Նոյն երեւոյթը արձանագրուած է նաեւ ԱՄՆ-ի եւ Թորոնթոյի մէջ 2022-ին, ուր բոլոր տարիքի մասնակցողներու մեծ մասը՝ յատկապէս երիտասարդները, համայնքային կուսակցական կազմակերպութիւններուն մէջ գործուն մասնակցութիւն չունէին:

Երիտասարդներու մեծ մասին համար համայնքային կազմակերպութիւններու ծրագրերը չեն հետաքրքրեր զիրենք: Ըստ 2019-ի ուսումնասիրութեան, 34 տոկոսը նշած էր, որ երիտասարդներու հետաքրքրութիւններուն չհամապատասխանող ծրագրերու պակասը լուրջ խնդիր է: Ըստ 2021-ի Եւրոպայի համայնքներու արդիւնքներու, 16-24 տարեկաններու 56 տոկոսը առաջնահերթ կը նկատէր հայոց պատմութեան, լեզուի, արուեստի, երաժշտութեան, հայկական խոհանոցի եւ պարի շուրջ դասախօսութիւններու եւ միջոցառումներու կազմակերպումը: Նմանապէս, ըստ 2022-ի Միացեալ Նահանգներու եւ Թորոնթոյի մէջ կատարուած հարցախոյզի արդիւնքներու, «երիտասարդներու համար հետաքրքրական միջոցառումներու բացակայութիւնը» հիմնական խնդիր էր 18-24 տարեկաններու (46%) եւ 25-34 տարեկաններու (34%) համար:

Կարճ ըսած, այս տարիքային խումբերը կը զգան թէ չեն ներկայացուիր եւ հեռացած են աւանդական կառոյցներէն: Որակական հարցազրոյցներու ընթացքին երիտասարդ մասնակիցներ նշած են, որ համայնքային կազմակերպութիւնները չեն յարմարիր ժամանակներու փոփոխութիւններուն եւ չեն արտայայտեր ամբողջ համայնքին կարծիքը: Շատեր կը նշեն, որ կուսակցութիւնները եւ աւանդական կառոյցները չեն արդիականացած եւ չեն արտացոլեր նոր սերունդին մտածելակերպը: Այդուհանդերձ, կրթական եւ մշակութային ծրագրերուն նկատմամբ հետաքրքրութիւնը շատ բարձր է. 2022-ին, Թորոնթոյի հարցախոյզը ցոյց տուած է, որ 18-24 եւ 25-34 տարեկան երիտասարդներու համար «համայնքի տարանջատումը» կը մնայ հիմնական մտահոգութիւն:

Նոր սերունդը լսել, ոչ թէ ենթադրել

Բազմաթիւ կազմակերպութիւններ կ'ենթադրեն, որ եթէ

իրենք որոշ ծրագրեր յղանա՞ն եւ ստեղծեն՝ զեղեցիկ աֆիշներով եւ խելացի շուկայանցումով (marketing-ով), երիտասարդները ինքնաբերաբար պիտի «կլանեն» զանոնք: Սակայն այս մօտեցումը չի համապատասխաներ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւններուն: Այսօրուան նոր սերունդը կը փնտռէ իմաստ, ինքնութիւն, տարածք, ուր իր ձայնը նշանակութիւն ունի:

Երիտասարդները իսկապէս ներգրաւելու համար պէտք է սկսիլ լսել զանոնք: Ոչ միայն անհատական զրոյցներով, այլեւ հետեւողական հարցադրումներով, հետազօտութիւններով՝ հասկնալու, թէ ինչ ակնկալութիւններ ունին համայնքէն, եկեղեցիէն, կուսակցութիւններէն, միութիւններէն, եւ ընդհանրապէս հայկական կազմակերպութիւններէն:

Այս գործընթացը կրնայ շօշափելի կերպով իրագործել՝ստեղծելով երիտասարդական խորհուրդներ, կազմակերպելով բաց ֆորումներ եւ քննարկումներ, ուր պատահիներու եւ երիտասարդութեան ձայնը ոչ միայն կը հնչէ եւ կ'արձանագրուի, այլեւ կը դառնայ առաջնորդող ուղեցոյց:

Նոր մեթոտներ նոր սերունդին համար

Համայնքներու ապագան կախեալ է նոր սերունդէն, որ այսօր լուռ է, բայց ունի ձգտում եւ տեսլական: Կառոյցները միայն բեմ չեն կրնար ըլլալ, ուր երիտասարդները կը լսեն, այլ հարթակ՝ ուր անոնք կը խօսին:

Անհրաժեշտ է ստեղծել առցանց եւ արհեստագիտական հարթակներ՝ խթանելու կապեր եւ համագործակցութիւն: Միայն ֆիզիքական ներկայութիւնը այլեւս բաւարար չէ՝ այսօրուան ժամանակակից երիտասարդին հասնելու համար:

Երիտասարդներուն համար պէտք է մշակել անձնական եւ մասնագիտական զարգացման ծրագրեր. օրինակ՝ հիւր խօսողներու մասնակցութեամբ քննարկումներ, ձեռնարկատիրութեան ու ինքնարտայայտման աշխատանոցներ, որոնք կ'ամրացնեն կապը ազգային պատկանելիութեան եւ անհատական կերտումին միջեւ:

Սփիւռքեան կառոյցներն ու կազմակերպութիւնները «ազգային ծառայութիւն», «յանձնառութիւն» եւ «պարտականութիւն» քարոզելէ առաջ, նախ մարդ կ'երտելով պէտք է զբաղին. նկարագիր եւ ինքնութիւն ձեւաւորելու մասին մտածել: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք դեր ունի համայնքին մէջ, ոչ թէ միայն ունկնդիր է: Երիտասարդները ներշնչել, լիցքաւորել եւ ուղեկից ըլլալ անոնց որպէս գործակիցներ: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք համայնքի ձեւաւորման մասնակից է, ոչ միայն ստացող:

Ճկուն եւ երիտասարդակեդրոն մօտեցումները պէտք է առաջնորդուին ոչ թէ ծրագրերու քանակով, այլ անոնց ազդեցութեամբ: Հարցը այլեւս «ինչպէ՞ս անոնք կրնան մեզի միանալ» չէ, այլ՝ «ինչպէ՞ս մենք կրնանք իմաստալից ըլլալ անոնց աշխարհին մէջ»:

Վերջերս Վարազ Գեթսեմանեան⁽³⁾ լիբանանահայ համայնքի հիմնական խնդիրներու մասին դիպուկ յօդուածի մը մէջ մատը վերքին վրայ դրած էր: Այսօր յստակ տեսանելի է, որ հաստատութեան կանխարգը անկարող է նոր հայեցակարգեր ձեւաւորելու: Ան «կը շարունակէ շարժիլ աւանդոյթի ուժով միայն, հանրային, համայնքային եւ ազգային կեանքը սահմանափակելով հետաքրքրութիւններու շատ նեղ եւ շատ յաճախ ժամանակավրէպ օրակարգերով», կ'ընդօժէ դոկտ. Գեթսեմանեան: Շատեր, դժգոհ համակարգի մտաւորական պարապութենէն, կը ձգտին դուրս գալու անոր սահմաններէն՝ արարելու նոր տարածքներու մէջ: Սակայն անոնք կը բախին կարծրացած ինքնութեան շրջանակներու, որոնք արգելք կը հանդիսանան նորարարութեան:

Եթէ եկեղեցին, կուսակցութիւնները եւ համայնքային մշակութային, ուսումնական եւ բարեսիրական կազմակերպութիւնները իսկապէս լուրջ են իրենց առաքելութեան մէջ, ապա անոնք պէտք է դուրս գան միապաղաղ աւանդոյթներու սահմաններէն, ընդարձակեն իրենց տեսլականը եւ ստեղծեն այնպիսի ներառարական ու ստեղծագործ միջավայրեր, ուր երիտասարդութիւնը կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողութիւնները:

«Տարբերակ21»

⁽¹⁾ <https://shorturl.at/XCnUG>.
⁽²⁾ «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ», Armenian Diaspora Survey, 2019, 2021, 2022.
⁽³⁾ «Ազգակ», 14 Ապրիլ 2025.



«ԵՐԻՄՏՈՆԵՌՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻՆ ՆԵՐՍ ՓՈԲՐԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՆԿԱՏՈՒԵԼՈՒ ԲԱՐՊՈՅԹԵՆ ԴԵՏՔ Է ԱԶԱՏՈՒԻ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

7-8 Մայիս 2025-ին Ամմանի (Յորդանան) մէջ տեղի ունեցած քրիստոնեայ-իսլամ միջազգային համագումարի բացման նիստի իր խօսքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով շեշտեց, որ Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքները իրենք զիրենք փոքրամասնութիւն նկատելու եւ նկատուելու բարդոյթէն պէտք է դուրս գան:

Համագումարը կազմակերպուած էր Յորդանանի Հասան Պըն Թալալ իշխանի հիմնած ու զխաւորած քրիստոնեայ-իսլամ կազմակերպութեան կողմէ: Յայտնեց, որ Հասան իշխանը Յորդանանի նախկին թագաւոր Հուսէյնի փոքր եղբայրն է եւ ներկայ թագաւոր Ապտալլայի հօրեղբայրը: Համագումարին կը մասնակցէին քրիստոնեայ ու իսլամ հոգեւորականներ ու մասնագէտներ: Բացման նիստին նաեւ ներկայ էին բազմաթիւ հրաւիրեալներ՝ պետական, դիւանագիտական ու կրօնական շրջանակներէ: Նոյն նիստին խօսք առին նաեւ հինգ քրիստոնեայ հոգեւոր պետեր եւ իշխան Հասան:



Իր խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը շեշտել էր երկրորդութիւնը քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան ու գործակցութեան, համագումարին ուշադրութեան յանձնեց հետեւեալ բնագաւառները, որոնք կը կարօտին յատուկ ուշադրութեան.- ընկերաբարոյական հարցեր, հաւատք եւ բանականութիւն, կրօնք եւ քաղաքականութիւն, կրօնքի շահագործում, հաւաքական բարոյական արժեհամակարգի ստեղծում:

Իր խօսքի երկրորդ բաժնին մէջ Նորին Սրբութիւնը անդրադարձաւ, թէ քրիստոնեայ-իսլամ միասնաբար ինչ նպաստ կրնան բերել ներկայ աշխարհի հարցերուն: Այս ծիրէն ներս Հայրապետը յիշեց կենսոլորտը, կրօնական ծայրայեղութիւնը, անարդարութիւնը, մարդկային իրաւանց անտեսումը եւ ընկերութեան կեանքը խաթարող երեւոյթներու բազմացումը, միաժամանակ շեշտելով, որ յիշեալ մարգերէն ներս երկու միաստուածեան կրօններու գործակցութիւնը կարեւոր է եւ հրամայական:

Աւարտին, Հայրապետը ըսաւ, որ քրիստոնեայ համայնքները եկուոր չեն տարածաշրջանէն ներս. անոնք իրենց յատուկ ինքնութեամբ, աւանդութիւններով ու մշակոյթով կը պատկանին շրջանի քաղաքակրթութեան: Քրիստոնեայ համայնքները տարածաշրջանի հասարակութեան լուսանցքին վրայ չեն, այլ մայր էջին վրայ են՝ իրենց գործօն մասնակցութիւնը բերելով Միջին Արեւելքէն ներս արդարութեան վրայ հաստատուած խաղաղութեան հաստատման ու բարգաւաճման:

Երկու օրերու վրայ տարածուած համագումարը լծուեցաւ աշխատանքի՝ քննարկելով քրիստոնեայ-իսլամ գործակցութեան ու գոյակցութեան առնչուած շարք մը հարցեր:

Համագումարի աւարտին ժողովին առաջարկները պարզող ընդհանուր յայտարարութիւն մը կատարուեցաւ:

Նորին Սուրբ Օծութիւնը յաճախակի առիթներով խօսք առաւ եւ այս ծիրէն ներս իր ունեցած երկար տարիներու փորձառութեան լոյսին տակ իր տեսակէտները պարզեց:

Յայտնեց, որ ժողովական աշխատանքներուն մասնակից դարձաւ նաեւ իշխան Հասան, որուն Վեհափառ Հայրապետը տարիներ առաջ ծանօթացած էր, եւ բերաւ իր դրական մասնակցութիւնը հարցերու քննարկման:

Ժողովական աշխատանքներուն առընթեր Արամ Ա. կաթողիկոս հետեւեալ հանդիպումները ունեցաւ Ամմանի մէջ.-
- Վեհափառ Հայրապետը հեռաձայնային խօսակցութիւնը ունեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ն.Ա.Տ. Նուրհան արք. Մանուկեանի հետ:

- Նորին Սրբութեան այցելեց Յորդանանի եւ Իրաքի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Սեւակ Աւետիսեան:
- Հայրապետը հանդիպում ունեցաւ Նորին Սրբութիւն ասորի ուղղափառ Աֆրամ Բ. պատրիարքին հետ: Երկու հոգեւոր պետերը քննարկեցին յառաջիկայ շաբաթ Գահիրէի (Եգիպտոս) մէջ տեղի ունենալիք հանդիպումին առնչուած նիւթեր:
- Յաճախակի առիթներով Նորին Սրբութիւնը հակիրճ հանդիպումներ ունեցաւ իշխան Հասանի հետ եւ իր գնահատանքը յայտնեց համագումարի ընթացքին երկու առիթներով Հայոց ցեղասպանութիւնը յիշելուն համար:

- Վեհափառ Հայրապետին այցելեցին Ամմանի հայ համայնքի Ազգային վարչութեան անդամները, առաջնորդութեամբ հոգեւոր հովիւ Գերպ. Տ. Աւետիս Ժ. վրդ. Իփրաճեանի:

- Նորին Սրբութիւնը ընդունեց այցելութիւնը Երուսաղէմի Հայոց Թաղի Պատրիարքութեան եւ Պաշտպանութեան շարժման (SavetheArQ) համահիմնադիրներ Յակոբ Եմնագեանի եւ Սեդրակ Պաւեանի: Անոնք եկած էին ներկայացնելու Երուսաղէմի Կովերու պարտէզին հարցը: Նորին Սրբութիւնը շեշտեց յիշեալ հարցին կարեւորութիւնը եւ զայն համազգային ճիգերով հետապնդելու անհրաժեշտութիւնը:

- Տոքթ. Աբգար Գեորգեան Նորին Սրբութեան յանձնեց Սուրբ Զատիկի ճրագայոցին Երուսաղէմի Սուրբ Յարութիւն տաճարի Քրիստոսի վիմափոր գերեզմանէն ծագած լոյսը: Վեհափառ Հայրապետը զայն բերաւ Մայրավանք:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՍԴՇԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Շարունակում է 1-ին

նակցած է երկրի քաղաքական կեանքին՝ երեսփոխանական, քաղաքապետական ու թաղապետական ընտրություններում: «Մաս կազմելով Լիբանանի ազատության, անկախության, ինքնիշխանության, բարգաւաճումին ու վերելքին հաւատա-ցող դաշինքներու, ՍԴՀԿ հայութեան ներկայացուցիչ եղած է Պէյրուքի քաղաքապետարանին ու մայրաքաղաքի Մտաուար թաղամասին մէջ», յիշեցուց ընկ. Միհրանեան: Ան վստա-հութիւն յայտնեց, որ Հնչակեան կուսակցութեան առաջադրած զոյգ թեկնածուները իրենց ծառայութեամբ պիտի գոհացնեն մայրաքաղաքի հայաշատ թաղամասերու բնակչութեան կարիքները: Ան հաւաստիացուց, որ կուսակցութեան ընտրա-



կան գրասենեակը կը շարունակէ աշխոյժ աշխատանքը՝ պատրաստուելով ընդամենը հինգ օր ետք կազմակերպուելիք ընտրութիւններուն: «Ժողովուրդի ծոցէն ծնած Սոցիալ Դեմոկ-րատ Հնչակեան Կուսակցութիւնը, ժողովուրդին հետ եւ ժողո-վուրդին համար աշխատելու սկզբունքով, ոչ մէկ ատեն յուսախաբ ըրած է իրեն վստահած հայորդիները», շեշտեց ընկ. Միհրանեան՝ վստահեցնելով, որ այս աշխատանքը 18 Մայիսի ընտրական օրուան աւարտին պիտի պսակուի արդար յաղթանակով:



Հանդիպումին ընթացքին իրենց հակիրճ խօսքերը արտա-սանեցին նաեւ Պէյրուքի քաղաքապետական խորհուրդի թեկնածու Յովհաննէ Յակոբ Պէքեանը եւ մայրաքաղաքի Մտաուար թաղամասի քաղապետական թեկնածու Արմէն Մելքոն Սէֆերեանը, ապա ներկաներուն հետ գրուցելով արծարծեցին Պէյրուքի բնակչութեան տարրական կարիքները եւ քաղաքացիներուն կենսամակարդակը բարձրացնելու միտումով ծրագրեր իրականացնելու հնարաւորութիւնները: Հանդիպումը վերջ գտաւ «Ուխտի հրաւեր» երգով:

ՔԱԿ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԿՊՐՈՇԷ ՎԱՐ ԴՆԵԼ ԶԵՔԸ

Շարունակում է 2-ին

ԿԱԶԱՅԻ ՄԵՋ ԳԵՐԻԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄ

Համաա շարժումի բանբեր Ապու Օպայտա երէկ յայտնեց, թէ շարժումի «Քասսամ» զինեալ թելը վերջապէս որոշած է ազատ արձակել իր գերեվարած խորալէացիներէն Իստան Ալեքսան-տըրը, որ կը կրէ նաեւ ամերիկեան քաղաքացիութիւն: Նշեմք, որ ամերիկացիներուն եւ երկքաղաքացիութիւն կրող այլ գերիներու ազատ արձակումը բազմիցս շեշտուած է Ուաշինկ-



թընի եւ այլ մայրաքաղաքներու կողմէ, որպէս մարդասիրական օգնութիւններ Կազա ուղարկելու եւ Իսրայէլին վրայ ճնշում բանեցնելու նախապայման:

ՊԱՊԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒՄ

Հռոմի նորընտիր Լեոն (Լեօ) ԺԴ. պապը Հռոմի մէջ պա-պական ընտրութեան հետեւած լրագրողներուն կոչ ուղղեց բիրեղացնելու հաղորդակցական նոր մեթոտ մը, որ գերծ կը մնայ վիրաւորական եւ թշնամական արտայայտութենէն, ինչպէս նաեւ առեականումի մշակոյթէն, այլ կը կեդրոնանայ համախոհութեան եւ սիրոյ վրայ՝ միշտ բացայայտելու համար իրականութիւնը: Պապը իր աջակցութիւնը յայտնեց բան-տարկուած լրագրողներուն եւ կոչ ուղղեց անյապաղ ազատ արձակելու զանոնք:

«ՊԱՐՍԵԼՈՆԱ» ԸՆԴԴԵՄ ՔԻԼԻԸՆ ՄՊԱՓԷ՝ 4 – 3

Մարզատէր ընթերցողները թող ծաղրական չընդունին վերոնշեալ խորագիրը: Յիշաւի մեծ էր մատրիտցիներու ռմբարկուին ջանքերը ոչ միայն պարտութենէ խուսափելու, այլ յատկապէս՝ այս տարեշրջանին Փարիզի ՍԷՆ Ժըրմէնէն իր դէպի «Ռէալ» տեղափոխութիւնը առնուազն բաժակով մը արդիւ-նաւորելու յոյսով: Սակայն 5-րդ, 14-րդ եւ 70-րդ վայրկեան-



ներուն անոր նշանակած նշանակած հեթրիքը բաւարար չեղաւ «Պարսելոնա»-ի աղիւսակային առաջատարի դիրքը ցնցելու համար: Գաթալոնցիները կանուխէն երկու կոլեր ստանալու «ապտակ»էն ետք միայն սքափեցան ու մինչեւ կիսախաղ հաշիւը տակն ու վրայ ընելով 4-ի դէմ 2-ի վերածեցին: Հանգիստէն վերջ, Մպափիի նշանակած 3-րդ կոլը հաշիւը դարձուց 4 – 3, որ անփոփոխ մնալով արձանագրուեցաւ որպէս մրցումին վերջնական արդիւնքը:




«Պարսա»-ի ֆութպոլիստները տօնեցին այս տարեշրջանի «Ռէալ»-ի դէմ իրենց 4-րդ անընդմէջ յաղթանակը: Երկու մրցում որպէս փոյեյեանական «Քլասիքօ» (4 – 0 եւ 4 – 3), Սպանիոյ թագաւորի բաժակը՝ «Copa del Rey» (3 – 2) եւ Սպանիոյ գերբաժակը՝ «Supercopa de España» (5 – 2):

Ընդհանուր գումարով, «մայրաքաղաքցի»ներուն դէմ «Պարսելոնա»-ն նշանակած է 16 կոլ եւ ստացած՝ 7: Սա բաւական նուաստացնող ցուցանիշ է Գալլօ Անժելօթիի սանե-րուն համար: «Ռէալ»-ի բերորը գրաւողներն են՝ Ռաֆինիա՝ 5, Եամալ՝ 3, Լեւանտովսքի՝ 3, եւ Փետրի, Թորրէս, Գունտ, Կարսիա, Պալտէ՝ 1-ական անգամ:

Միւս կողմէ, սակայն, պէտք է նշել նաեւ, որ «Պարսելոնա»-ի կոլերու զանձարանը այս տարի բաւական արդիւնաւետ է: Ան փոյեյեանութեան աւարտէն 3 մրցում առաջ նշանակած ունի 95 կոլ: Լեւանտովսքիին պարագլուխն է՝ 25 կոլ, Ռաֆինիան՝ 18, Թորրէս՝ 10, Օլմօ՝ 9, Եամալ՝ 7 եւ այլն: Միակ զարմանալին այն է, որ այս սարսափազդու խումբը կարծեք սովորութիւն դար-ձուցած ըլլայ ֆութպոլ խաղալ առաջին վայրկեաններուն մէկ կամ երկու կոլ ստանալէ ետք միայն:

Սպանիոյ բաժակին տիրանալէ ետք, դէպի փոյեյեանութեան նուաճումը մնացած է ընդամենը 3 մրցում: «Պարսելոնա»-ին այդ 9 հնարաւորէն հարկաւոր է միայն 2 միաւորի վաստակում փոյեյեանութիւնն ալ «գրպանելու» համար:

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրուք (մասամբ ամպամած) ցերեկը 24/20՝ գիշերը՝ 58% տամուկ

Երեւան (անձրեւոտ) ցերեկը 21/12՝ գիշերը՝ 54% տամուկ

Հալէպ (մասամբ ամպամած) ցերեկը 36/23՝ գիշերը՝ 17% տամուկ

Դամասկոս (ընդհ. արեւոտ) ցերեկը 25/14՝ գիշերը՝ 35% տամուկ

Տուպայ (արեւոտ) ցերեկը 39/29՝ գիշերը՝ 28% տամուկ

Լոս Անճելըս (մասամբ ամպամած) ցերեկը 20/14՝ գիշերը՝ 47% տամուկ

Սիտնի – վաղը (մասամբ ամպամած) ցերեկը 21/15՝ գիշերը՝ 73% տամուկ

Մոնթեվիտո – վաղը (մասամբ ամպամած) ցերեկը 23/16՝ գիշերը՝ 80% տամուկ

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (ش.م.م.)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

13 Մայիս 2025: Տարւան 133-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 232 օր:

Պէպեր-տօներ

1830 - Էքուատոր Մեծ Քոլումպիոյ կազմէն դուրս գալով ինքզինք հռչակեց որպէս առանձին հանրապետութիւն:

1907 – Գործարկուեցաւ Երեւանի առաջին ջրաէլեկտ-րակայանը:

1950 - Տեղի ունեցաւ «Ֆորմուլա 1»-ի առաջին մրցարշաւը:

1846 – Ա.Մ.Ն. գոնկլեր մեծամասնութեամբ կը հաս-տատէ Մեքսիքոյի դէմ պատերազմ յայտարարելու մասին որոշումը: Թեքսաս նահանգը Մեքսիքոյին կցելու որո-շումը խթան հանդիսացաւ երկու երկիրներու միջեւ լարուածութեան սաստակցման:

1981 - Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. պապը Վատիկանի Սուրբ Պետրոսի հրապարակին վրայ մահափորձի ենթարկուեցաւ եւ ծանրօրէն վիրաւորուեցաւ ազգութեամբ թուրք Մեհմետ Ալի Աքճայի կողմէ:

2003 - Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն հար-ցազրոյցի մը ընթացքին յայտնեց, թէ Պաղեստինի տարածքին 2001 թուականի Մարտէն յետոյ կառուցուած խորայլէն բնակավայրերու քանդումը խաղաղութեան ճանապարհային քարտեզի վրայ ծեռնարկուած քայլերէն մէկ է:

1965 - Արեւմտեան Գերմանիան եւ Իսրայէլ հանդէս եկան լիարժեք դիւանագիտական յարաբերություններու բացման մասին յայտարարութեամբ: Ալճերիան, Իրաքը, Յորդանանը, Սէուտական Արաբիան, Սուրիան, Ա.Մ.Է.-ն եւ Եմէնը իրենց յարաբերութիւնները խզեցին Արեւմտեան Գերմանիոյ հետ:

1957 – ԱՄՆ ռազմաօդային ուժերու 3 օդաչուներ Լոնտոնէն Լոս Անճելըս առանց դադարի թռիչք կատա-րեցին դառնալով պատմութեան մէջ ամենաերկար միա-շարժիչ օդանաւով թռիչք կատարողները:

1937 - Վերջին տարիներուն հրեաներու դէմ ամենա-լուրջ ջարդը կատարուեցաւ Լեհաստանի Պրեք-Լիթովսքի քաղաքին մէջ:

2010 - Անկոլան, Լիպիան, Մալիզիան, Թայլանտը եւ Ուկրաինան միացան ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու խորհուրդին:

1954 – ԱՄՆ Պաշտպանութեան նախարարութիւնը եւ Հիւլէական ուժանիւթի վարչութիւնը յայտարարեցին Մարշալեան կղզիներու մէջ կատարուած ջրածնային ռումբի շարք մը փորձարկումներու յաջողութեան մասին:

Ծնունդներ

1950 - Սթիվի Ուոնտըր, ամերիկացի երգիչ, երգերու հեղինակ եւ բազմա-գործիքաւորող: Ան 20-րդ դարու վերջը ամենաստեղծագործ երաժշտական դէմքերէն մէկն էր:

1840 - Ալֆոնս Տոտէ, ֆրանսացի վիպասան եւ թատերագիր: 1870-ական թուականներուն յարած էր Եմիլ Զոլայի գլխաւորած բնագաղտական դպրոցին եւ ստեղծած բարձր խաւին բարբերը մերկացնող սուր քննադատական վէպեր:

1955 - Անահիտ Ադամեան, բանաս-տեղծուհի, հրապարակախօս, բանասիրական գիտութիւններու թեկնածու, Հայաստանի գրողներու միութեան անդամ:

1935 - Երուանդ Նազարեթի Ազատեան (Էտմոն Կոտալազեան) գրող, հրապարակախօս, հասարա-կական գործիչ: Երեւանի պետա-կան համալսարանի պատուաւոր դոկտոր: Հայաստանի գրողներու միութեան անդամ:

1951 - Յովհաննէ Լեւոնի Զաքարեան, լեզուաբան, բառարանագիր, դասագիրքերու հեղինակ:

1930 - Մաստ էլ-Ապտալլա էլ-Սալէմ էլ-Սապահ, Քուէյթի 4-րդ էմիրն էր, որ 2006-ին թագաւորեց միայն ինը օր:

1995 - Սիարոն Աշոտի Վիրապեան, մարզիկ, եռամարտի աշխարհի փոյեյեան, «Guinness Book»-ի եռակի մրցանշակիր:

Մահեր

1956 - Ալեքսանտր Ալեքսանտրի Ֆատէւ, խորհրդային գրող, հասարա-կական գործիչ: Իր գործերը բեմակա-նացուած ու նկարահանուած են, եւ նաեւ թարգմանուած խՍՀՄ եւ այլ երկրներու լեզուներով: Հոգեկան ընկճախտի հետե-ւանքով ատրճանակով անճանապարհ եղած է:

2019 - Հրաչեայ Գեորգի Աշուղեան, բեմադրիչ, փորձեսոր: ՀՀ ժողովրդական արուեստագէտ:

2022 - Շէյխ Խալիֆա պըն Զաիտ էլ-Նահիան, Արաբական Միացեալ Եմիրու-թիւններու նախագահ (2004-2022), Ապու Տապիի էմիր:



Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հ.Կ. Մարո Նազարեթեան Մասնաճիւղի

Մայրերու օր

Տեղի Կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս, 2025-ի, առաւօտեան ժամը 11-էն սկսեալ "Mamoutia" ճաշարանէն ներս, Զալքա

Ձեր ներկայութիւնը հաստատել միջեւ Մայիս 15
Հեռաձայնելով 70/110919 կամ 71/316298